

Ընդհանուր առմամբ ՇԽ 2007 թվ. ընտրությունների կարգի վերաբերյալ ներկայացվել են հետևյալ առաջարկությունները.

Հեղինակ	Նկարագրությունը	Ընթացքը	Իրավական հիմքերը
<p>1. Լևոն Բարսեղյան ՇԽ անդամ</p>	<p>ՇԽ անդամ Լ. Բարսեղյանը վերանայել է կանոնակարգի ներկայացված տարբերակը և ներմուծել փոփոխություններ և լրացումներ: Հատկանշական էր մասնակիցներին բացառման կարգով որոշելու սկզբունքը, որին մասնակիցներին հավանություն չտվեցին:</p>	<p>Ներկայացված առաջարկությունները հիմնականում ընդունվել են:</p>	
<p>2. Արգար Եղոյան «Սպառողների իրավունքների պաշտպանություն» ՀԿ նախագահ</p>	<p>Առաջարկության մեջ ընդգրկված են հետևյալ երեք կետերը.</p> <ol style="list-style-type: none"> 1. սպառողական կոոպերատիվների մասնակցության հարցը (բացառել) 2. 10 ձայնի իրավունքը փոխարինել 5-ով 3. առավելագույն ձայներ հավաքած մասնակիցները իրավունք ունեն որպես ՇԽ անդամ պաշտոնավարել 2 տարի ժամկետով 	<ol style="list-style-type: none"> 1. քննարկման փուլում է. 2. ընդունվել է. 3. Ըստ Կառավարման համաձայնագրի ՇԽ անդամները վերընտրվում են յուրաքանչյուր ծրագրային տարվա ընթացքում: 	

<p>3. Սարգիս Սեդրակյան «Ֆերմերական շարժում» ՀԿ նախագահ</p>	<p>Հիմնականում ներկայացվել էին հետևյալ փոփոխությունները.</p> <ol style="list-style-type: none"> 1. սպառողական կոոպերատիվների մասնակցության հարցը (բացառել) 2. 10 ձայնի իրավունքը փոխարինել 5-ով 3. ՇԽ այն անդամները, ովքեր ընտրվել են 2 տարի ժամկետով չեն կարող լինել ընտրական հանձնաժողովի անդամ 	<ol style="list-style-type: none"> 1. քննարկման փուլում է 2. ընդունվել է 3. ընդունվել է 	
<p>4. Հասմիկ Ասլանյան “Շողեր Միություն” ՀԿ նախագահ</p>	<p>Առաջարկության հիմնական դրույթները.</p> <ol style="list-style-type: none"> 1. սպառողական կոոպերատիվների մասնակցության հարցը (բացառել) 2. 10-ի փոխարեն մասնակիցներին 5 ձայնի իրավունքի հարցը 3. ՇԽ այն անդամները, ովքեր ընտրվել են 2 տարի ժամկետով չեն կարող լինել ընտրական հանձնաժողովի անդամ 	<ol style="list-style-type: none"> 1. քննարկման փուլում է 2. ընդունվել է 3. ընդունվել է 	

<p>5. Լևոն Ներսիսյան ՇԽ անդամ</p>	<p>Առաջարկվում է վերանայել կարգի 8-րդ կետը, այն է «ՇԽ անդամի ետկանչը», քանի որ ներկայացված դրույթը իրականում կիրառելի չէ:</p>	<p>Ըստ աշխատանքային խմբի ներկայացուցիչների այս հարցի լուծումը կախված է այս կամ այն իրադրությունից և հստակ սահմանում չի կարող ունենալ:</p>	
<p>6. Մուշեղ Եկմանյան Գործընկերություն հանուն բաց հասարակության</p>	<p>Ներկայացվել է կանոնակարգի նոր այլընտրոնքային տարբերակ, որը հիմնական սկզբունքներով մեծամասամբ համընկնում է մինչ այս ներկայացված տարբերակներին և կարծիքներին:</p>	<p>Քանի որ կանոնակարգի այս տարբերակը համապարփակ է և հեշտ ընթեռնելի, որպես կմախք կվերցվի այս տարբերակը:</p>	
<p>7. Սոնա Այվազյան Թրանսփարենսի ինքերնեշնալ</p>	<p>Առաջարկվում է ընտրություններին մասնակիցների համար չափանիշներ սահմանել հիմնված փորձառության, անկախության և հանրային շահը ներկայացնելու սկզբունքների վրա, որոնք մանրամասն շարադրվում են նամակի մեջ:</p>	<p>Ներկա կանոնակարգը նախատեսում է, որ հետաքրքրության հայտը իր մեջ պետք է ներառի նաև տեղեկատվություն կազմակերպության առաքելության և գործունեության վերաբերյալ: Սակայն կարգը չի ենթադրում հայտի մերժում այն դեպքում, եթե կազմակերպության կամ մասնակցի գործունեությունը չեն առնչվում ծրագրին:</p> <p>Չնայած ՇԽ վերջին երկու նիստերի ժամանակ Ս. Այվազյանը բարձրացրել է այս հարցը, սակայն որևէ լուծում չի տրվել հարցին այն</p>	<p>Կառավարման համաձայնագրում տեղ գտած այս պարբերությունը կարելի է մեկնաբանել որպես մասնակցության չափանիշների սահմանում: Շահառուների խորհրդի անդամները, որոնք պետք է լինեն ՀԿ հանրության (այդ թվում` բնապահպանության հարցերով զբաղվող ՀԿ-ների, ջրօգտագործողների միությունների և ֆերմերների խմբերի)</p>

		<p>բացատրությամբ, որ ՇԽ անդամի պարտականությունները հավասարապես կարող են ստանձնել քաղաքացիական հասարակության յուրաքանչյուր ներկայացուցիչ, և այդ իրավունքի սահմանափակումը կարող է տեղի տալ անցանկալի դժգոհությունների և քննադատության:</p> <p>Այնուհանդերձ, Ս. Այվազյանի կողմից առաջարկվող այն դրույթը, որ ՇԽ թեկնածուն չպետք է լինի պետական պաշտոնյա ընդունելի է ՇԽ անդամների մեծ մասի համար:</p>	<p>կողմից կազմակերպված կամ նրանց ներկայացուցիչների մասնակցությամբ անցկացվող ազգային եւ/կամ ռեգիոնալ ժողովներում ընտրված անհատներ՝ հաշվի առնելով համապատասխան գենդերային նկատառումները և մասնագիտացման շահերն ու Ծրագրի իրագործմանն առնչվող գիտելիքները և փորձը: Միևնույն ժամանակ Համաձայնագիրը որևէ կերպ չի սահմանափակում որևէ շահառու խմբի ներկայացուցչի մասնակցությունը:</p>
<p>8. ՇԽ նիստերին ներկայացված առաջարկություններ.</p>	<p>ա) կիրառել միայն ինքնաառաջադրման սկզբունքը (ՇԽ անդամ Ա. Հովհաննիսյան)</p> <p>բ) մասնակիցներից պահանջել գրանցման վկայական (ՇԽ անդամ Ա. Հովհաննիսյան)</p> <p>գ) բացառել միջազգային մասնակցության հարցը</p>	<p>ա) ընդունվել է</p> <p>բ) ընդունվել է</p> <p>գ) ընդունվել է</p>	

	դ) սպառողական կոոպերատիվների հարցը պետք է որոշի ընդհանուր ժողովը	դ) ընդունվել է	
--	--	----------------	--

Ամփոփելով կարել է նշել, որ վիճելի հիմնական դրույթները հետևյալ են՝

1. Ովքե՞ր կարող են մասնակցել ՇԽ ընտրություններին:
2. Պետք է արդյո՞ք սահմանել չափանիշներ ընտրությունների մասնակիցների համար, թե ոչ: